հավելված 4

նախագիծ

# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-14/24

ք.Երևան ___. ________. 2014թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ -----------------, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «____» ___-ն, ի դեմս __________ (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Գնման առարկայի բնութագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

## 2. Մատակարարման պայմանները (Գնման ժամանակացույց)

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչությանը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք հասցեով:

2.2 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում: Վաճառողի կողմից Ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվում 2014թ.-ի դեկտեմբերի 21-ը:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### 3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում, Վաճառողի պահանջով՝ Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրով Կատարողի կողմից մատակարարման ենթակա Ապրանքների ընդհանուր գինը կազմում է _____ (__________) ՀՀ դրամ, ներառյալ  հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ապրանքի միավորի գինը սահմանվում է Պայմանագրի հավելված N1-ով: Գինը ներառում է նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամսում (եթե արձանագրությունն կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն կատարվում է 20 բանկային

օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

5.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4) երկու օրինակ և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը:

5.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**6. Ապրանքի որակը**

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Պայմանագրի 1.1 կետում նշված Գնման առարկայի բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 1,0 (մեկ) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Պայմանագիր ստորագրած Կողմի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.2. Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.3. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4. Վաճառողը պարտավոր է Պայմանագրի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

9.5. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.6. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.7. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8. Պայմանագրի հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը (ներառյալ հավելվածները) կազմված է - (--) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ | |
| ք. Երևան, Կառավարական թ.1 շենք | |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչ. | |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ |
| էլ. հասցեն՝ gnumner@gov.am | էլ. հասցեն՝ |
| -------------------------------- | -------------------------------- |
| / --------------------- / | / --------------- / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1.*
*«____» _______ 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-14/24 գնման պայմանագրի*

**Գնման առարկայի բնութագիր**

Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր

ՀՀ դրամ

| Հ/հ | Անվանումը | Տեխնիկական բնութագրերը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Թուղթ A4 ֆորմատի | A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ$^{2}$ , (210X297) մմ., սպիտակությունը՝ ոչ պակաս 96%, փաթեթավորումը՝ տուփում 500թերթ: | տուփ | 2320 | | |
| 2 | Թուղթ գունավոր, A4 ֆորմատի | Բաց վարդագույն թուղթ՝ տպագրելու համար , A4, 90 գ/մ$^{2}$ (210x297) մմ ձևաչափի, որակյալ, տուփում՝ 100 հատ: | տուփ | 20 | | |
| … | | | | | | |
| | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | |

*Բոլոր գրենական պիտույքները և գրասենյակային նյութերը պետք է լինեն չօգտագործված և նախատեսված լինեն գրասենյակային աշխատանքների համար:*

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

---------------------------------
/ -------------- /
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

Հ/Հ
ՀՎՀՀ
էլ. հասցեն՝

---------------------------------
/ ---------------- /
Կ.Տ

*Հավելված N 2.*
*«____» _______ 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-14/24 գնման պայմանագրի*

**Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման**

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր | | | | | | | | | 100% | | 100% | |
| Ընդամենը | | | | X | | X | | X | | X | 100% | X | 100% |

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

---------------------------------
/ ------------------ /

Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

Հ/Հ
ՀՎՀՀ
էլ. հասցեն՝

---------------------------------
/ --------------- /

Կ.Տ

## Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման
## Վճարման ժամանակացույց*

հազար ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր | | | | | | | | 50% | 50% | 75% | 100% | **100%** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ
ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

--------------------------------
/ ------------------ /
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հ/Հ
ՀՎՀՀ
էլ. հասցեն՝

--------------------------------
/ --------------- /
Կ.Տ

*Հավելված N 4.*
*«____» _______ 2014թ. կնքված*
*N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-14/24 գնման պայմանագրի*

| **Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ** | **Գ Ն Ո Ր Դ** |
|---|---|
| | ՀՀ կառավարության աշխատակազմ |
| Հ/Հ | ք. Երևան, Կառավարական թ.1 շենք |
| ՀՎՀՀ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| | Հ/Հ 900011022085 |
| | ՀՎՀՀ 02505554 |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<_____>> <<____________________>> 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ «ՀՀ կատավարության աշխատակազմի համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման պայմանագիր»
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<___________________>> 2014թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-14/24
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ ----------------------- և Կատարողը՝ ի դեմս__________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև __ _________ 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Մատակարարումների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ________________________________ | ________________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |